ԲԱՑՎԵՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի դահլիճում, նախագահությամբ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց կրթական հաստատության հերթական՝ 1996-97 ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությունը:

Արարողությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո ուսանողների քառաձայն երգչախմբի կատարմամբ հնչեցին Հայաստանի Հանրապետության և Հոգևոր ճեմարանի օրհներգերը:

Կրթօջախի վերակացու Բաբկեն աբեղ. Սալբիյանի կողմից հանդիսությունը պաշտոնապես բացված հայտարարելուց հետո, Մարկոսի Ավետարանի Դ գլխի 1-6-րդ կետերի ընթերցմամբ հանդես եկավ Տրդատ աբեղ. Մարտիրոսյանը:

Հոգևոր ճեմարանի ներկա և ընթացիկ աշխատանքներին էր նվիրված կրթօջախի տեսուչ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի զեկույցը: Հոգեշնորհ Հայր Սուրբը, խոսելով Ճեմարանի մի քանի կարևոր խնդիրների շուրջ, հայտնեց, որ այս ուսումնական տարում Ճեմարանում չեն անցկացվել ընդունելության քննություններ: Դրա փոխարեն՝ փոխադրական քննություններ հանձնելով առաջին լսարան են անցել Գյումրիի դպրանոցի 11 սաներ և մի քանի ուսանողներ այլ թեմերից: Տարին նշանավորվում է մեկ իրողությամբ ևս. Հոգևոր ճեմարանը, առաջին անգամ իր գոյության պատմության մեջ, իր հարկի տակ է առել Սևանի Վազգենյան դպրանոցի ինը սաներ, որոնք իրենց ուսումը պետք է շարունակեն ավարտական լսարանում: Այսպիսով հաստատության սաների թիվը անցել է 100-ից: Բայց, ինչպես նշեց հաստատության տեսուչը, քանակից առավել կարևոր է որակը, քանի որ այսօր մեր Եկեղեցուն անհրաժեշտ են նվիրյալ, հավատավոր, աշխատասեր և անբասիր հոգևորականներ, որոնք կլրացնեն անցած տասնամյակների բացը և կդառնան արժանի ծառայողներ, նորօրյա հոգևորականներ հաջորդ հազարամյակի համար: Իր ելույթում Հայր Սուրբը գնահատանքով արտահայտվեց այն սաների հասցեին, որոնց համար ամռան ամիսները եղան Մայր Աթոռի նկատմամբ նվիրումի և սիրո արտահայտության ամիսներ, քանի որ նրանք գերադասեցին իրենց արձակուրդի օրերին աշխատել Մայր Տաճարում և Հայաստանի թեմերում:

Հանդիսության ավարտին կրթօջախի սաներին իր օրհնության խոսքն ասաց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորելով նրանց նոր ուսումնական տարվա առթիվ, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ տարեշրջանը բացվում է բարձր առաջադիմության և մեծ նվաճումների հեռանկարով: Այս տարեշրջանով է նշվում նոր, 1700-ամյակի հնգամյակի սկիզբը: Ընդգծելով մաքուր և առողջ մթնոլորտի առկայության կարևորությունը, Նորին Սրբությունը շեշտեց, որ եկել է խոսքից գործի անցնելու ժամանակը, և ուրախությամբ հայտնեց, որ հաջորդ ուսումնական տարին կբացվի արդեն «Նորափթիթ, Նորափետուր զարդարյալ» Գևորգյան ճեմարանի հարկի ներքո, նույն տարում կսկսվի ուսանողական եռահարկ հանրակացարանի շենքի կառուցումը:

Վեհափառ Հայրապետը իր խոսքն ավարտեց Եզնիկ Կողբացու պատգամով. «Հնազանդեա յուսով, աղօթեա հաւատով, աշխատեա սիրով»:

Թող այս պատգամը դրոշմվի մեր սաների հոգուստների վրա և դառնա ուղեցույց նրանց ողջ կյանքի ընթացքում, ասաց Նորին Սրբությունը:

Հանդիսությունը փակվեց Տերունական և Պահպանիչ աղոթքով:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ